

ԼՈՒՐԵՐ ԹԵՄԵՐԻՑ

ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ 71-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի մայիսի 4—5 օրերին Ուստրի ս. Փրկիչ հայոց եկեղեցում տեղի է ունենում Հայաստանյայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևելյան առաջնորդական թեմի 71-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը՝ նախագահությամբ առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:

Մայիսի 4-ին, ուրբաթ օրը, ժամը 13.45-ին, ներկայությամբ 108 պատգամավորների, նախագահ սրբազան հոր աղոթքով բացվում է թեմական ժողովի Ա նիստը:

Ընտրվում է 71-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի դիվանի կազմը՝ ատենապետությամբ Երվանդ Չափյանի:

71-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովին ուղղված ողջույնի խոսք է ասում Ուստրի ս. Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

Ապա ընթերցվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1973 թվականի հունվար 15 թվակիր հմր. 742 օրհնության կոնդակը՝ տրված Ամերիկայի հայոց թեմի հաստատման 75-ամյակի առիթով, որն ունկընդրվում է հոտնկայս:

Այնուհետև վավերացվում է 70-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի ատենագրությունը:

Առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը կարդում է տարեկան իր ուղերձը:

Ա նիստում առաջարկություններ են արվում թեմական կանոնադրության որոշ հոդվածների բարեփոխման վերաբերյալ:

Մայիսի 5-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9.50-ին, ներկայությամբ 122 պատգամավորների, սկսվում է ժողովի Բ նիստը, որը զբաղվում է օրակարգի վրա դրված հարցերով:

Պատգամավորական ժողովի Գ նիստը բացվում է նույն օրը, ժամը 14.45-ին, ուր քննության են առնվում հաշվեքննիչ հանձնաժողովի զեկուցումը և օրակարգի վրա դրված այլ հարցեր:

Թեմական խորհրդի կողմից արվում են մի շարք առաջարկություններ՝ թեմի հետագա գործունեության համար:

Նույն նիստում որոշվում է նաև թեմական պատգամավորական ժողովի 1974 թվականի գումարման վայրն ու ժամանակը:

Դ նիստը գումարվում է նույն օրը, 22.40-ին, որի ընթացքում քննության են առնվում օրակարգի վրա դրված բոլոր հարցերը և ընդունվում համապատասխան որոշումներ:

Սույն նիստում արձանագրվում է թեմական պատգամավորական ժողովի որդիական սերը, հարգանքը և հավատարմությունը Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի նկատմամբ: Թեմական պատգամավորական ժողովը հայտնում է նաև իր սրտագին շնորհակալությունը Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակի և պատգամի համար՝ մաղթելով Նորին Ս. Օծությանը շուտափույթ առողջություն և արեվշատություն: